Հաստատված է
Շուշիի տեխնոլոգիական համալսարանի
գիտական խորհրդի 2025 թ մարտի 6-ի
N1-03/25/9 որոշմամբ:

Գիտական խորհրդի նախագահ՝
Ն.Ա.Միքայելյան

ԿԱՐԳ

ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 *«ՇՏՀ միջին մասնագիտական կրթական ծրագրի (այսուհետ՝ ՄՄԿԾ) կառուցվածքը և բովանդակությունը»* կարգը սահմանում է ՄՄԿԾ-ի կառուցվածքը, ընդհանուր բովանդակությունը, ուսանողի բեռնվածությունն ըստ կիսամյակների, կառուցամասերի և կրթամասերի, ուսումնական աշխատանքի ձևերի, ծրագրի դասընթացների և կրթական այլ մոդուլների կազմն ու աշխատածավալները:

1.2 ՄՄԿԾ-ն բաղկացած է 3 հիմնական կառուցամասերից՝ ընդհանուր կրթական, մասնագիտական և այլ մոդուլներ: Առաջինն իր հերթին բաղկացած է՝ 1. ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական, 2. առանցքային հմտություններ մասերից, իսկ երկրորդն՝ ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական մասերց, Այլ մոդուլների մեջ մտնում են նախասիրական կամ կամընտրային դասընթացները/մոդուլները, կուրսային աշխատանքները, պրակտիկաները, պետական ատեստավորման քննությունները: Նախատեսված աշխատանքներն իրականացվում են համաձայն աղյուսակ 1-ում և 2-ում ներկայացված աշխատածավալների համամասնության.

Աղյուսակ 1

ՄՄԿԾ-ի ընդհանուր կրթական և
մասնագիտական կառուցամասերի հարաբերակցությունը %-ով

Կիսամյակ	I	II	III	IV	V	VI	VII	VIII
Ընդհանուր կրթական	0-100	90-100	50-60	50-60	0-10	0-10	0-10	0-10
Մասնագիտական կառուցամաս	0-10	0-10	40-50	40-50	90-100	90-100	90-100	90-100

1.3. ՄՄԿԾ-ի տևողությունը 3-4 տարի է (6-8 կիսամյակ): Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 19-շաբաթյա տևողություն, որից՝ 13-16 շաբաթը հատկացվում է լսարանային պարապմունքներին, 1-2-ը՝ քննաշրջանին, 21-37 շաբաթ՝ պրակտիկաներին:

1.4 ՄՄԿԾ-ի կառուցման հիմքում դրված է ուսանողի շաբաթական լրիվ ուսումնական բեռնվածությունն 30-37 ժամ (10% թույլատրելի շեղումով):

1.5 Ընդհանուր կրթական կառուցամասի աշխատածավալը ծրագրի ընդհանուր ծավալում կազմում է առավելագույնը 40%, իսկ մասնագիտական կառուցամասինը՝ նվազագույնը 60%: Երկու կառուցամասերն էլ ներառում են տարբեր ժամաքանակով դասընթացներ և ուսումնական մոդուլներ: Ընդհանուր կրթական կառուցամասն ընդգրկում է միայն պարտադիր դասընթացներ: Մասնագիտական կառուցամասը ներառում է պարտադիր, կամընտրական կամ հատուկ մասնագիտական դասընթացներ, ինչպես նաև կրթական այլ մոդուլներ (կուրսային աշխատանքներ (նախագծեր), պրակտիկա(ներ) և պետական ամփոփիչ ատեստավորումներ):

1.6 ՄՄԿԾ-ում ուսանողի շաբաթական առավելագույն լսարանային բեռնվածությունը 1-ից 7-րդ կիսամյակներում կազմում է մինչև 37 ժամ, իսկ 7-ից 8–րդ կիսամյակներում մինչև 26 ժամ: Կրթական այն ծրագրերում, որտեղ նախատեսվում են ուսումնական պրակտիկաներ տվյալ կիսամյակի լսարանային բեռնվածությունը համապատասխանաբար նվազում է:

1.7 Դասընթացի (մոդուլի) շաբաթական լրիվ աշխատածավալը որոշվում է ուսանողի լսարանային և ինքնուրույն աշխատանքի ժամաքանակների գումարով: Ելնելով լսարանային պարապմունքի ձևից և համապատասխան ժամաքանակից որոշվում է ուսանողից պահանջվող ինքնուրույն աշխատանքի ծավալը, որի և լսարանային ժամաքանակի հանրագումարը կազմում է դասընթացի շաբաթական լրիվ աշխատածավալը:

2.ՄՄԿԾ-ի ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ընդհանուր կրթական կառուցամաս

2.1 Ընդհանուր կրթական կառացամասը նպատակաուղղված է ՄՄԿԾ-ի որակավորման ընդհանուր հենքի (ընդհանրական/փոխանցելի գիտելիքներ և կարողություններ) ապահովմանը և կարող է ընդգրկել պարտադիր և կամընտրական դասընթացներ/մոդուլներ:

2.2 *Պարտադիր դասընթացների* ընդհանուր աշխատածավալը 30 % է, որը ներառում է մինչև

26 մոդուլ: Այս դասընթացները իրականացվում են 1-ից և 4-րդ կուրսերում և նպատակաուղղված են ուսանողների ընդհանրական (փոխանցելի) գիտելիքների և կարողությունների ձևավորմանը և զարգացմանը, ինչպես օրինակ մայրենի և օտար լեզուներով գրավոր և բանավոր հաղորդակցմանը, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմանը, իրավունքի հիմնադրույթների ճանաչմանը, արտակարգ իրավիճակներում ճիշտ և կազմակերպված կողմնորոշմանը և այլն:

Մասնագիտական կառուցամաս

2.3 *Մասնագիտական* կառուցամասը նպատակաուղղված է ՄՄԿԾ-ի որակավորման մասնագիտական հենքային գիտելիքների և կարողությունների ձևավորմանը և զարգացմանը:Այն ընդգրկում է պարտադիր մասնագիտական, կամընտրական կամ հատուկ մասնագիտական դասընթացներ: Մասնագիտական կառուցամասի պարտադիր և կամընտրական (հատուկ մասնագիտական) մոդուլ– դասընթացների ընդհանուր քանակը չպետք է գերազանցի 57-ը:

2.4 Այս կրթամասի բովանդակությունը, դասընթացների կազմն ու դրանց աշխատածավալը որոշում են ծրագիրն իրականացնող դեպարտամենտները և ամբիոնները ապահովելով ՄՄԿԾ մակարդակում տվյալ մասնագիտության համար պահանջվող գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերումը: Դրանք մշակվում են՝ հաշվի առնելով որակավորումների, ազգային (առկայության դեպքում նաև ոլորտային) շրջանակների և մասնագիտական աշխատաշուկայի արդի պահանջները, ինչպես նաև տվյալ մասնագիտության միջազգային ծրագրային չափանիշները և հենանիշները:

2.5 Կամընտրական մասնագիտական դասընթացներն ապահովում են ուսանողի նեղ մասնագիտական նախասիրություններով պայմանավորված հատուկ գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը: Կամընտրական մասնագիտական դասընթացների ընդհանուր աշխատածավալը մինչև 100 ժամ է: Առաջարկվող դասընթացների ցանկը ներառում է ընտրվող դասընթացների քանակից կրկնակի ավել և միևնույն ժամաքանակով դասընթացներ: Այս կամընտրական դասընթացներն իրականացվում են 4-8-րդ կիսամյակներում:

2.6 Հատուկ մասնագիտական դասընթացներ. Կրթական ծրագրի կառուցվածքում, ելնելով մասնագիտության առանձնահատկություններից նախատեսվում են հատուկ մասնագիտական դասընթացներ: Դրանք նպատակաուղղված են մասնագիտության որևէ նեղ ոլորտում

խորացված գիտելիքների և կարողությունների ձեռքբերմանը: Դասընթացներն իրականացվում են 5-8-րդ:

2.7 Կրթական այլ մոդուլներ. Ծրագրի կրթական այլ մոդուլները ներառում են առավելագույնը մինչև 2 կուրսային աշխատանք, կամ 1 կուրսային նախագիծ, մինչև 25 շաբաթ աշխատածավալով ուսումնական, արտադրական, նախաավարտական և մինչև 2 պետական ատեստավորման քննություններ:

• Կուրսային աշխատանքները նախատեսված են մասնագիտական ոլորտում ստացված տեսական գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունների զարգացմանը: Կուրսային աշխատանքները կատարվում են 4-ից 8-րդ կիսամյակներում և գնահատվում են 10 միավորանոց սանդղակով: Կուրսային աշխատանքի կատարման կիսամյակում համապատասխանաբար նվազում է այդ կիսամյակի լսարանային բեռնվածությունը (ժամերը):

• Ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաները կազմակերպվում են 3-ից 8-րդ կիսամյակներում համապատասխան ամբիոնի (դեպարտամենտի) կողմից կազմված և հաստատված ծրագրով: Այն կազմակերպվում է մասնագիտական ուղղվածություն ունեցող ձեռնարկություններում, որն ավարտվում է ստուգարքով և դիֆերենցիալ ստուգարքով: Ուսանողները պրակտիկայի կատարման վերաբերյալ ներկայացնում են սահմանված ձևաչափի և բովանդակության հաշվետվություն:

• Այս բաժնում, ելնելով մասնագիտության առանձնահատկություններից, կարող են նախատեսվել նաև պրակտիկայի այլ ձևեր, որոնց իրականացման կիսամյակը և տևողությունը (շաբաթները) որոշում է մասնագիտացնող ամբիոնը /դեպարտամենտը/: Ծրագրում պրակտիկայի այլ ձևեր նախատեսելու դեպքում համապատասխանաբար նվազում է պարտադիր մասնագիտական դասընթացների քանակը, ինչպես նաև լսարանային բեռնվածությունը (ժամերը): Բոլոր ուսանողները համապատասխան նմուշի դիպլոմ ստանալու համար անցնում են պետական ատեստավորում, հանձնելով մինչև 2 պետական քննություններ:

3.ՄՄԿԾ-ի ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՄՄԿԾ-ի բաղկացուցիչ դասընթացների կազմն ու բովանդակությունը, ինչպես նաև դասավանդման, ուսումնառության և գնահատման ձևերն ու մեթոդներն ընտրվում են այնպես, որպեսզի բավարարեն ոլորտը կարգավորող հետևյալ պաշտոնական փաստաթղթերի պահանջները.

3.1 *ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի* մակարդակների նկարագրիչներով ՄՄԿԾ-ի որակավորման աստիճանի համար սահմանված կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը արտահայտված գիտելիքների, կարողությունների և հմտությունների անհրաժեշտ կազմով:

3.2 *ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ոլորտային շրջանակի* (առկայության դեպքում) որակավորումների նկարագրիչներով տվյալ մասնագիտությամբ ՄՄԿԾ-ի որակավորման աստիճանի համար սահմանված կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը արտահայտված գիտելիքների, կարողությունների և հմտությունների անհրաժեշտ կազմով:

3.3 ՇՏՀ ՄՄԿԾ-ի մշակման կարգի և կրթական ծրագրի մասնագրի կազմման պահանջները:

3.4 Տվյալ մասնագիտական ոլորտում կիրառվող միջազգային ծրագրային կողմնորոշիչները և հենանիշները (բենչմարքները), տեղական և գլոբալ մասնագիտական աշխատաշուկայի պահանջները և այլն:

Գիտական խորհրդի նախագահ **Ն.Ա.Միքայելյան**

Գիտական քարտուղար **Լ.Գ.Այդինյան**